ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+374 10) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

Ք. Երևան 08.12.2023թ.

Որոշում
<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն ՓԲԸ տնօրենի
Թիվ ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ- 23/67-1

Ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.09.2023 թվականին <<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/67 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցել է նաև <<ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ–ն (Այսուհետև՝ Ընկերություն):

Հայտերի բացման և գնահատման նիստին գնահատող հանձնաժողովի թիվ 6 որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից:

Պայմանագիր կնքելու որոշումը հրապարակվել է տեղեկագրում 09.10.2023 թվականին:

Ընկերությանը պայմանագիր կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ներկայացվել է 27.10.2023 թվականին:

Հրավերի պահանջների համաձայն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ընկերությունը պարտավոր էր Պատվիրատուին ներկայացնել իր կողմից կնքված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները: 06.11.2023 թվականի դրությամբ նշված ժամկետը լրացել է, սակայն ընկերությունը կնքված պայմանագիր, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումներ չի ներկայացրել Պատվիրատուին: ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն տվյալ դեպքում <<ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

07.11.2023 թվականին կայացած գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի թիվ 2 որոշմամբ Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել <<ԿՈԴՎԵՅՎ>> ՍՊԸ-ն:

Պայմանագիր կնքելու որոշումը հրապարակվել է տեղեկագրում 07.11.2023 թվականին:

<<ԿՈԴՎԵՅՎ>> ՍՊԸ-ի հետ սահմանված ժամկետում և կարգով, 27.11.2023 թվականին կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-23/67 գնման պայմանագիրը:

Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 28.11.2023 թվականին:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8,14 կետով սահմանված է հետևյալը.

<<Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդով քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (այդ թվում շտկման ենթակա) կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:>>

<u>Ընդունել ի գիտություն, որ Ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ առկա չէ և սույն որոշման կայացման պահին Ընկերության կողմից հայտի ապահովում չի վճարվել Պատվիրատուին:</u>

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ	01338243	ք. Երևան, Մազմանյան 4-53	-	-	Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց	08.12.2023թ: ՆՄԲԿ-ԳՀՇՁԲ-23/67

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

<<ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ